ՀՀ Արագածոտնի մարզի <<Բյուրականի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ – ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ նախակրթարանի դաստիարակի (1 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցելու ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ:

3.Անձը հաստատող փաստաթուղթ:

4. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից, առկայության դեպքում նաև աշխատանքային գրքույկի պատճեն:

5. Ինքանկենսագրություն (Ձև 5):

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ :

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

9. Որակավորման տարակարգ ունենալու հավաստող փաստաթուղթ:

10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս ցուցաբերած արդյունքի մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

11. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:

12. <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 10-ից նոյեմբերի 21-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00—15:00-ն:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, Բյուրականի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Բյուրական համայնք, փ.1, նրբ.1, շ.1:

Հեռ.՝ 033-55-93-13